

ՊԱՐՍԿԱՆԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ԵՐԳԻՑ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏ ՕՂԱՆԵԱՆ

(Շար. տես թվ. 1922. էջ 73)

7. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ: Տէր Կարապետի զբաղման մէջ նշանաւոր տեղ են բռնում նրա ժամանակագրական-պատմական գրածքները: Իբր պատմական գրածք, Տէր-Կարապետն ունի նախ «Ասպար ուր հարիւր վարսուն ինկին» գրածքը, 39 տուն, որով նա, իբրև ականատես, տալիս է մեզ 1869 թւի երաշտի ու սովի համառօտ և ամբողջ պատմութիւնը: Երաշտը, որին երգիչը ասուածային պատիժ է համարում, չորացնում, փչացնում է ցորենի, զարու արտերը, արօտատեղիները, որով մի զարհուրելի սով է ընկնում Սպահանում, Նոր-Չուղայում և Փէրիս, Չահարմանալ, Գեազազ և այլ գաւառներում: Սովի հետևանքով ժողովրդի թշուառութիւնը հասնում է ծայրայնգութեան և բացում է մի սբուտանմէլի անտարան: Մեծ ու պղտիկ, հարուստ և «Իխլայայ» մեռնում են սովից, բայց նրանց ոչ պատանող կայ, ոչ էլ թաղող, նրանք դաշտերում փուած են անտէր և անտիրական ու զազաններին կերակուր են դառնում: Սուգ ու շիւանը բռնել է չորս կողմը, բոլորն էլ գտնում են սովի ճանկերում: Նրանցից շատերը սոված ընկած են դաշտերում, շատերն էլ մանշունչ, «անեաֆաս» փողօցներում են մահ գալիս: Պատուաւոր կանանցից շատերն ասես՝ մուրացկան են դարձել և մի կտոր չոր հացի համար ձեռք են կռակարում, պաղատում ու լալիս, բայց նրանց հաց տուող չկայ, որովհետև գութը վերացել է և մարդկանց սրտերը քարացել: Շատ ընտանիքներում երեխաները քաղցից լալիս են, հառաչում: սիրեկան հայրը չկարուղանալով տանել իր զաւակների արտասուքը՝ թողնում է տունը և փախչում, իսկ սիրեկան մայրը հոգեվարքի մէջ

տանջւում է, նա մոռացել է իր զաւակների սէրը:

Լալիս են, գոռում են ֆարգանդ ու մէրն, Թողնում էր, փախչում էր սիրիկան հէրն: Վերացել էր որդուց ծնողաց սէրն, Սիրական մէրն որդույն ատող ելաւ:

Մարդիկ այլևս սատկած կատի, շան և իշու միս են ուտում և իրար բզկտում: Բայց աւելի սրտանմէլիկն այն է, որ շատ մայրեր մորթում են իրենց հարսզատ զաւակներին, եփում և ուտում:

Վէր ընկածիցն էլաւ մի տեսակ փոսն, Մէրն դանակով կտրեց իր որդույն միսն: Եփեց, կերաւ փետրվարի ամիսն, Ճշմարիտ է, սուտ չէ, որ տեսնող ելաւ:

Յետոյ յայտնի է «Մնացիկ ենք տարուկուսած» խորագրով ոտանաւորը, որի մէջ երգիչը բողոքում է կալածատէր խաների, լուսերի և չար դիւանի բիրաւոր զեղծումների և կաշառակերութեան դէմ, որոնք իրենց ձեռքում կենտրոնացրել են զիւղերի հարստութիւնը և շնորհիւ իրենց քաղաքական զօրութեան՝ տգրուկների նման ասիւնաանկիտեզ կերպով ձծում են երկրագործ ժողովրդի արիւնը և անխնայօրէն հարստահարում, կեղեքում ու օրըսօրէ աւելի ու աւելի դառնացնում աշխատաւոր զիւղացու կեանքը:

Մեզի խոյ կանն դարբէղար, Օրէց օր ըլնում է բաթար: Էլ մին օր չն թողնում դաղար: Տալիս քարէ քարն մեզի:

Բայց այս չէ բոլորը: Նրանք զիւղացիների հետ վարում են իբրև ճորտերի և անխնայօրէն անարգում են, կալանաւորում, բանտարկում և յաճախ մի շնչին պատճառով սպանում են:

Մհարում են հաստ չվանով, Մեզ պահում են կիսատ շանով: Սպանում են մին փուէ բանով, Ինչպէս մին ոչխարն մեզի:

Այսպէս գիւղացիներն զգում են, որ իրենք ենթակայ են խաների և լօտերի կամայականութիւններին, գիտեն որ տէրը չեն իրենց ճակատի քրտնքին, իրենց հալալ աշխատանքին, և եթէ աշխատին, ցանեն, հնձեն, կալսեն էլ, միևնոյնն է, տգրուկ խաները պիտի բռնագրասեն իրենց սեփական աշխատանքի արդիւնքը և իրենք պիտի մնան դատարկ ձեռքով: Երգիչն այդ բոլոր թշուառութիւնների, միակ պատճառ համարում է գիւղացիների գործած վնասը, ուստի իր հօտին յորդորում է Տէր Աստծուն յուսալ, որովհետև նա միայն կարող է փրկել այդ բռնակալների ձեռքից:

8. ԼԻՐԻՔԱՅԱՆ: Մի շարք ոտանաւորներն մէջ Տէր-կարապետը հրգում է իր անհատական վիշտը, թախիծն ու մտորումները: Երգիչն էս աշխարհում երբեք հանգստութիւն չունի, շատ է տանջւում. նրա տանջանքի գլխաւոր պատճառն իր «չարմական» սիրտն է, որը ոչ մի ժամ «գարսր» չունի և անվերջ փոխում է երգչի հոգեկան տրամադրութիւնը, նրա ներքին աշխարհը: Նրա սիրտը մի անհուն ծով է, մի հրդեհ, որ երբեմն բարկանում է, կրակ է դառնում, եփում ու ծակում, երբեմն հանդարտում, ճշմարիտ դատաւոր է դառնում, երբեմն ծուլանում է, յուշաթափուածի պէս տարակուսում, երբեմն արխանում է, հաստատ կանգնում. երբեմն ազահ է դառնում, աշխարհի սէրիցը չի կշտանում. երբեմն հպարտանում, ո՛չ երկիւղ է կրում, ո՛չ էլ ամաչում. երբեմն էլ ցածանում, Աստուած է կանչւում, հողի հաւասար դառնում.

Երբոր բարկանում ես՝ վառած կրակ ես,
 Ում յես որ կը խօսաս, կ'եփես, կ'ծակես.
 Երբ հանդարտանում ես՝ օրէնքի տակ ես,
 Լաւ, ուղիղ, ճշմարիտ դատաւոր ես:

Երբ հպարտանում ես՝ քեզ չես ճանաչում,
 Ո՛չ երկիւղ ես կրում, ո՛չ էլ ամաչում.
 Երբոր ցածանում ես՝ Աստուած ես կանչում,
 Խոնարկում ես, հողի հաւասար ես դու:

Այսպէս ահա երգչի սիրտն անվերջ ա-

նորոշ և հակասական տրամադրութիւնների մէջ է: Ռայց այդ չէ բոլորը: Նրբացել է երգիչը, ջահէլութիւնը գնացել. նա այլևս ո՛չ ոյժ ունի, ո՛չ էլ զօրութիւն, որով մըլամադոստ և տխուր են հնչում նրա քնարի լարերը, և ինչպէս թախծոտ չի հնչեն, երբ թուկ են նրա զլիխց խելքն ու «յոչը»: Երբ ստուել են նրա սրտի «նախսն ու զոչը», երբ ողջ զգայարանները թուլացել են, ատամները դեղնել, ոտները նիհարել, մատղազ գոյնը գնացել և մարմինը կուզ է եկել «աւնան բառնչկած խոտի պէս»:

Երիտասարդական իմ խելքն ու յուն, թունալ իմ զլիխցս, յիմարացայ ես.
 Աչքերս չունեն զօրութիւն, լոյսն քաշվել է,
 Ականջներս խլացել են, ջանս մաշվել է.
 Խելքս զլիխցս թաղօր է էլի, քովել է,
 Սրտիս հաւասն ստուել է, սէրութիւն չունեմ:

Երգիչը զգում է, որ կանգնած է մահան շէմքին և քիչ ժամանակից յետոյ իր մարմինը հող պիտի դառնայ: Եւ նա ակամայիտ աչքերի առաջն է պատկերացնում իր անցեալ կեանքը և սարսափում իր պատկերից, որովհետև զգում է, որ ինքը շատ է հետևել անցաւոր աշխարհիս, շատ է սիրել մարմնականը: Այդպիսի դրութեան մէջ նա զիմում է Աստծուն և խոստովանում իր «սննուն» մեղքերը, որովհետև.

Թէպէտ մեղաւոր եմ, Աստուած փրկօղ է,
 Թէ ողորմելի եմ, նա ողորմօղ է.
 Ի՞թէ ծովի մէջ եմ, նա ինձ հանօղ է,
 Թէ որ մեղքս շիտակ խոստովանեմ ես:

9. ԽԱՌՆ ՄՈՍԻՒՆԵՐ: Տէր-կարապետի հրգերի մէջ կան և խառն մօտիւններ, որոնք արտայայտում են զանազան մտքեր և զգացումներ: Այսպէս, «Մարդ կայ» բանաստեղծութիւնը զանազան մարդկանց բնատրուութիւնը բնորոշող մի անպանոյճ պատկեր է: «Աղամորդոս կեանքը» կեանքի և աշխարհի ունայնութեան նկարագրութիւնն է: «Մարդ քանի որ կենդան է»

ցոյց է տալիս մարդկանց կեանքի զոյու-
թեան համար միայն պայքարը: «Այ կար-
միր վարդ» զարնան և բլրուլի շուրջ հիւս-
ւած յոռետես մի բանաստեղծութիւն է:
«Խնկրում եմ յեզկէն» երգով՝ երգիչն իր
բարեկամին տուն է հրաւիրում, որպէս զի
միասին ուրախ ժամանց անցկացնեն: «Ինչ
ևս ուզամ տեստերիցը» աշուղ Յարդին
օղուն ուղղւած յանդիմանութիւն է «Դուք
չաւ ինչի ձուկակեցէր»-ը հայ գեղջուկ կնոջ
զանգաւոր մասին հիւսւած բռնագործիկ մի
երգ է: «Այդոյ մէջը» առակածն իւրատ-
նեք են, իսկ «Վարժապետը» և «Աշակեր-
տը» մանկավարժական ինդիքներով շուրջ
շօշափւած ոտանաւորներ են:

Սրանք են ահա Տէր-Կարապետի եր-
գերի նիւթերը, որոնք իրենց բովանդա-
կութեամբ յիշեցնում են մեզ Յարթին
օղուն և Ամիր օղուն. դրանից երևում
է, որ Տէր-Կարապետը ծանօթ է եղել
յիշեալ երգիչներին (այդ ցոյց է տալիս
իր «դավարում» գրած յիշատակագիրը:
1840 թիւն Յարթուն օղի Յովհաննէան
զորացաւ, որ էր յոյժ ընտիր բանաստեղծ
աշըղ, կամ՝ 1826 փրկչի թւին աշըղ Ամիր
օղին մահացաւ, որ էր բուն բանաստեղծ
աշըղ. և մեծապէս ազդեւ է: Բայց շնա-
յած դրան՝ նա իր քերթւածներում գրեւ
է իր ինքնուրոյն գրողը:

Այսօր այդ երգերից շատերն անգիր
շրջում են գիւղացիների բերնում և երգ-
ւում փէրիս, Չահարմանալ, Բուրաբը,
Գեամարաւ, Գեափլա և այլն գաւառներում:

Բոմբէյ

20 Հոկտեմբեր 1921

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԱՆ

ՈՒՂԵՆԻ

Մ. Խ.—Ստացանք Պ. Երեմեանէ հետեւել ծանօթու-
թիւնը. «ՔԱՂՄԱՎԷՊԻ Ն. Բ.ում լոյս տեսած յօդուածի
ծանօթութեան մէջ սխալմամբ գրեւ եմ. «Իսկ Ղուլ Յով-
հաննէսի մասին մի յօդուած ուղարկել ենք Փարիզում լոյս
տեսնող «Օշակոն» ամսագրին: Խնդրում եմ Ն. Գ. ի
մէջ ուղղեցէր այսպէս. Վիեննայում լոյս տեսնող «Ա-
րեգ» ամսագրին»:

ՀՆԱԽՈՍՍԿԱՆՆ

Ա Բ Բ Ա Յ Ա Ր Ա Ն

(Շար. տես Բազ. 1922 էջ 41)



Ժ.Բ. Ժողովատեղի (Salle Capitulaire)

Վանատան մէջ որոշուած էր ընդարձակ
սրահ մ'ալ, ուր միանձունք կը ժողովէին
ունկնդրելու և գործադրելու մեծաւորաց
հրահանգներն և հրամանները և կը կո-
չուէր ժողովատեղի: Էջա-լա-Շափէլ ժո-
ղովին մէջ (817) ասոր յիշատակութիւնը
կայ:

Ժ.Գ. Փակարան կամ Արգելարան (Cloître)

Այն յարկածածուկ նրբաշափղը կամ
գաւթիթը, որ եկեղեցին և վանքին միւս
շէնքերն իւրաւու հետ հաղորդակցութեան
կը դնէր՝ կ'ըստի փակարան, որ և հոռվ-
մէական պալատաց atrium-ը կը յիշե-
ցնէ: Ներքին գաւթին մէջ կը գտնուէր ջըր-
հորը կամ աղբիւրը, Նրբաշափղներու մէջ
կ'անցնէին միանձունք ընթեռնու և ու-
սանելու համար՝ բացի եկեղեցական պաշ-
տաման, ճաշի և աշխատութեան ժամերէն:
Շարաթ օրեր հին ատեն աշխատարբը
հոս կը լուանային միանձանց ոտքերը:
Չմոռուան ցրտութեան պատճառաւ հարկ
տեսնուեք է ինչ ինչ տեղեր ասոր մերձ
վառարանով սննեակ մ'ալ յարդարել, որ
կը կուուէր տաքտուն (chauffoir), ինչ
որ մինչև ցայսօր շատ վանքերու մէջ դեռ
ևս կայ:

Ժ.Դ. Նորընծայարան (Maison des novices)

Միտքանութեան մը մաս կազմելու փա-
փազող անձինք՝ մասնաւոր շէնքի մը մէջ
կ'ամփոփուէին առաջնորդի մը վարչու-
թեան ներքև և կը կուուէին նորընծայի,
և իրենց բնակութեան վայրը Նորընծայա-
րան: Բնակարանն բոլորովին բաժնուած է